ՍԵԼԻՄԻ ԿԱՐԱՎԱՆԱՏԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ

Պատմական Հայաստանի գլխավոր ճանապարհների վրա ամենուրեք պահպանվել են աշխարհիկ կառուցվածքների՝ կարավանատների մնացորդներ։ Պահպանված կառուցվածքների դասավորությամբ հնարավոր է վերականգնել հնում անցնող ճանապարհների ուղղությունները, իսկ դրանց բացարձակ չափերը ճիշտ բնորոշում են այս կամ այն ճանապարհի կարևորությունը և անցողունակությունը։ Այդպիսի հին ճանապարհ ձգվել է Սևանա լճի ափից (այժմյան Մարտունի) մինչև Վայոց Ձոր։ Այդ ճանապարհի վրա պահպանվել են երկու կարավանատներ[1]։ Մեկը լեռան ստորոտում՝ Լեռնանցք (նախկինում Աղբենդ) գյուղի կարավանատունը, մյուսը լեռնանցքի գագաթին՝ Սելիմի նշանավոր կարավանատունը։ Վերջինս, կառուցված լինելով ճանապարհի եզրին, ձգվում է նրա երկայնքով։ Բաղկացած է երեք հիմնական կառուցվածքներից՝ եռանավ դահլիճից, նրան ուղղահայաց կառուցված սրահից (նախամուտքից) և արևելյան կողմում կից կառուցված առանձին մուտքով փոքր սրահից։ Այսպիսի դասավորությունը պատահական չէր, եթե հաշվի առնենք, որ կարավանատունը կառուցված է եղել ծովի մակերևույթից 2400 մ բարձրության վրա, ուր ցրտաշունչ ձմեռը պահանջում էր հատուկ միջոցառումներ՝ սառը օդը անմիջապես ներս չթողնելու համար։ Բացի այդ, լեռնանցքով փչող ուժեղ քամիներից պաշտպանվելու համար, որոնք փչում են հյուսիս-հարավ ուղղությամբ կարավանատունը կառուցել են ճանապարհից հարավ գտնվող հարթակի վրա։ Գլխավոր մուտքը նույնպես հարավից է և լրիվ պաշտպանված է քամիներից։

Կարավանատունը պատկանում է միադահլիճ եռանավ կառուցվածքների տիպին, որոնք ժամանակին լայն տարածում են գտել Հայաստանում[2]։ Եռանավ դահլիճի հատակագիծը դիտելիս համոզվում ես, որ արևելքից-արևմուտք ուղղությամբ ձգված այդ կառուցվածքը ներսում երկու շարք մույթերի օգնությամբ բաժանված է երեք ձգված նավերի, որոնցից կենտրոնականն ունի 5 մ ավելի թռիչք։ Փոքր նավերի թռիչքները կազմում են 3 մ և 3,2 մ։ Դրանց արևմտյան ծայրում տեղադրված են մեկական սենյակներ, որոնցից հարավայինի մուտքը բացվում է փոքր նավի մեջ, իսկ հյուսիսայինը՝ կենտրոնական նավից։

Եռանավ դահլիճը լուսավորվել է երեք երդիկներով, որոնց տանիքի վրա փոքր բացվածքը թաղի գագաթում դեպի ներս լայնանում է, առաջացնելով բավական գեղեցիկ ստալակտիտներով մշակված բացվածք։ Մեծ դահլիճին կից ուղղահայաց տեղադրված է նախասրահը, որի միակ արտաքին մուտքը բացված է հարավային ճակատում։ Այն ունի բավական ճոխ մշակված շրջամուտք, որի ճակատակալ քարի վրա պահպանվել է արաբատառ շինարարական արձանագրությունը։ Շինարարական հայերեն արձանագրությունը պահպանվել է նախասրահի ներսում, որից իմանում ենք կառուցվածքի ստեղծման տարեթիվը՝ 1332 թ.[3]։ Նախասրահի թաղի գագաթում, մեծ դահլիճի երդիկների նման, տեղադրված է ստալակտիտներով մշակված երդիկ։

Մինչև վերանորոգումը կարավանատունը գրտնվում էր անմխիթար վիճակում՝ եռանավ մեծ դահլիճը լայնական ուղղությամբ ճեղքված էր։ Արևելյան կեսը, արևմտյանի համեմատությամբ, մոտ 40 սմ շարժվել էր, այլ կերպ ասած՝ տեղի էր ունեցել սողքի երևույթ (նկ. № 1Ա, 2Ա)։ Տեղացիների պատմածի համաձայն կարավանատունը ճեղքվել է կայծակի հարվածից, սակայն դա գիտականորեն չի հիմնավորվում։ Այն լանջը, որի վրա կառուցված է կարավանատունը, կազմված էր հողմահարվող ապառներից, որոնց սողքի ենթարկվելու հետքերն այժմ էլ պարզ երևում են։ Սողքի երևույթ մեզ հաղորդեց դիտել 1964 թ. գարնանը տեղի ունեցած երկրաշարժից հետո։ Սելիմի կարավանատնից 300—400 մ հեռավորության վրա Եղեգնաձոր—Մարտունի ճանապարհի ծածկույթը 5—6 մ տեղաշարժվել էր հորիզոնական և 2 մ ուղղաձիգ ուղղությամբ։ Դա ամրապնդեց մեր համոզումը այն մասին, որ կարավանատան քանդման պատճառը հանդիսացել են երկրաշարժը և նրա հետևանքով առաջացած սողքը։ Եռանավ դահլիճի կենտրոնական մասը, համեմատած արևելյան և արևմտյան

1 Վ. Մ. Հարությունյան, Միջնադարյան Հայաստանի քարավանատներ և կամուրջներ, Երևան, 1960, էջ 17։

2 Նույն տեղում, էջ 15։

3 «Դիվան հայ վիմագրության», պրակ III, Երևան, 1967, էջ 177։

ծայրերի հետ, բավականին վեր էր բարձրացել. այդ զգացվում էր նաև պահպանված լուսանցկարների վրա։ Ներսում թափված էին քարերի և շաղախի մանր ու խոշոր բեկորներ։

Ճարտարապետներ Ս. Դավթյանի, Ա. Ժամհարյանի և Ս. Մարդարյանի 1949 թ. կատարած չափագրության հիման վրա ճարտարապետ Հրանտ Հակոբյանը 1955—1956 թթ. կազմեց վերանորոգման նախագիծը (նկ. № 1Ա և 2Բ) և ինքն էլ ղեկավարեց վերանորոգումը։ Նախագծի համաձայն վերաշարվեցին երեսապատի քիվերը, պակասող մասերում լրացվելով նոր քարով։ Թաղածածկում գոյացած ճեղքը լրացվեց երկաթբետոնով, առաջացնելով որոշակի խզվածք։ Արտաքին պատերի վրա ուժեղ դեֆորմացիայի հետքը թույլ էր զգացվում, սակայն ներսում այն խիստ նկատելի էր նույնիսկ վերանորոգումից հետո։ Իրականում հարավային պատը մոտ 40 սմ, իսկ հյուսիսայինը՝ մոտ 15 սմ ճեղքերով դուրս էին եկել ընդհանուր՝ դահլիճի երկու մասերը միացնող ուղիղ գծից։ Անհրաժեշտ էր ներսից և դրսից հնարավորին չափ վերացնել դեֆորմացիայի հետքերը, հուշարձանի նախկին տեսքը վերականգնելու համար. դա կատարվեց կարավանատան պատերի, հատկապես հարավային պատի հաստության հաշվին։

Այստեղ տեղին է նշել, որ հարավային և հյուսիսային պատերի ու տանիքի ուղղումը, որը քողարկում է ստորգետնյա հարվածի հետևանքով առաջացած զգալի տեղաշարժը, հուշարձանների վերանորոգման գիտական մեթոդիկայի տեսակետից ճիշտ չէ։ Ստացվել է, որ հուշարձանն արտաքինից չի կրում դեֆորմացիաների ոչ մի հետք, իսկ ներսում դա պարզ զգացվում է։ Արտաքինից դեֆորմացիաների հետք չերևալը հետևանք է պատերի հաստության և թաղերի վրա կատարված հոծ լիցքի։ Այսպիսով, հետագա ուսումնասիրողների համար առաջանալու է առեղծվածի բացատրության անհրաժեշտություն՝ ինչպե՞ս է գոյացել ներսի դեֆորմացիան, առանց արտաքին պատերի և տանիքի դեֆորմացիաների։

1956 թ. վերականգնվեցին հուշարձանի պատերը և քիվերը, իսկ 1957 թ. մաքրվեցին ներսում տարիների ընթացքում կուտակված աղբը, հողն ու քարը։

Եռանավ դահլիճի տանիքի երկու լանջերի վրա շարվել են բազալտե սալեր՝ հին ու նոր քարերով. տակի շարքերի նոր սալերի եզրերին արվել են 1 սմ բարձրությամբ և 2 սմ լայնությամբ երիզներ՝ անձրևաջրերի ներթափանցումը սալերի տակ կանխելու համար։ Այդ երիզների վրա դրված են տանիքի հարթ սալերի կարանները ծածկող սալերը։

Մինչև 1957 թ. աշխատանքները կատարվում էին ընդլայնական ճեղքից արևմուտք ընկած մասի արտաքին պատերի, քիվերի և տանիքների վերանորոգման ուղղությամբ։ 1957 թ. դրանք շարունակվեցին հիշյալ ճեղքից արևելք ընկած մասի արտաքին պատերի, քիվերի ու տանիքների վրա։ Այդ հատվածներում քանդվել և ընդհանուր գծով վերաշարվել են երեսապատերն ու քիվերը։ Այնուհետև վերականգնվել են տանիքների ծածկասալերը (նկ. № 3)։

Ընդլայնական ճեղքի առաջացման հետևանքով խախտվել էր տանիքների արևմտյան և արևելյան մասերի կարը, և այն քարով ծածկելու համար անհրաժեշտ էր այդ երկու մասերի միջև ստանալ որոշակի խզվածք։ Սակայն ծածկը քարե սալերով ավելի դյուրին իրականացնելու համար գերադասվեց շենքի երկու մասերը դնել մի հարթության վրա։ Եռանավ դահլիճի կենտրոնական մասը երկու ծայրերի հետ համեմատած բավականին վեր բարձրացված լինելու պատճառով քանդվեց մոտ 170 խմ. շաղախի լիցք։ Շաղախը չափազանց ամուր էր և այդ աշխատանքը գործիքներով կատարելու համար պահանջեց զգալի բանվորական ուժ։

1958 թ. սկսվեցին ներսի աշխատանքները. վերանորոգվեցին հատկապես հյուսիսային և հարավային պատերի երեսները, նավերի միջին սյունաշարքի խիստ դեֆորմացիայի ենթարկված ու տեղերից պոկված կամարների քարերն ու սյուները։ Վերանորոգվեցին նաև փոքր նավերի թաղերը։ Դրանք մասամբ վերաշարվեցին և լրացվեցին նոր քարերով[4]։

Եռանավ դահլիճից հետո վերանորոգվեց արևելյան մասին կից կառուցված դահլիճի հյուսիսային ճակատի երեսապատը և տանիքի սալերը լրացվեցին քարերով։ Արևելյան մասում կից կառուցված սրահը մնաց կիսավեր վիճակում։

Շատ պատասխանատու աշխատանք էր երկու դահլիճների հատման գծում բազալտե առավակի վերանորոգումը։ Հին քարերի մի մասը ջարդված էր, մի մասն էլ, տանիքների սալերի հետ միասին, պոկվել էր և տարվել։ Դրանք գտնելու բոլոր փորձերն անհաջողության մատնվեցին։ 1964 թ. գարնանն առավակն իրագործվեց նոր քարերից և ավելի կատարելագործված կոնստրուկցիայով։ Այդ աշխատանքները կատարում էր Միսակ Մենեջյանը՝ ճարտարապետներ Ա. Հարությունյանի և Յու. Թամանյանի ղեկավարությամբ։

Սելիմի կարավանատան վերանորոգման աշխատանքներն ավարտվեցին - 1964 թ., սակայն

---

4 Գ. Կանեցյանն առաջարկում էր թաղի ամրացման համար ընդարձակվող ցեմենտ օգտագործել։



Նկ. № 1. Սելիմի կարավանատան չափագրությունը և վերանորոգման նախագիծը. (հարավային հակատ)։
Ա. չափագրությունը, Բ. վերանորոգման նախագիծը։



Նկ. Ա՝ 2. Սեյիմի կարավանատան չափագրությունը և վերանորոգման նախագիծը.
(Հյուսիսային հակատ)։
Ա. չափագրությունը, Բ. վերանորոգման նախագիծը

թերի մնաց մետաղյա գոների տեղադրումը և շրջակայքի բարեկարգումը։

Վերանորոգման համար օգտագործվել են հուշարձանի շրջակայքի և դեպի Մարտունի տանող ճանապարհից 27 կմ հեռավորության վրա ընկած քարհանքից հանված մեծածավալ բազալտ քարերը։ Ավազը բերվել է Մարտունուց, Սևանա լճից, երբեմն էլ օգտագործվել է լեռնային ավազը, որի որակն այնքան էլ բարձր չէր։ Աշխատանքները կատարվել են խառը շաղախով։

Հուշարձանի վերանորոգման ժամանակ բավականաչափ բարդ խնդիրները տեղում լուծելու համար Սելիմում է եղել Հուշարձանների պահպանության գիտական խորհուրդը (Կ. Հովհաննիսյան, Վ. Հարությունյան, Հ. Սարգսյան, Բ. Առաքելյան, Կ. Ղաֆադարյան)։

Վերանորոգումը կատարել է Օ. Մեհեյանի ղեկավարած քարտաշ-որմնադիրների բրիգադը, 1956—57 թվականներին աշխատանքների մասնագիտական ղեկավարը եղել է ճարտարապետ Հ. Հակոբյանը։ 1957 թ. աշխատանքները ղեկավարել է Հ. Գասպարյանը, 1958 թ.՝ Ա. Հարությունյանը։

Նկ. № 3. Սելիմի կարավանատունը վերանորոգումից հետո։

ՅՈՒԼԻ ԹԱՄԱՆՅԱՆ